



ԾՐԱԳԻՐ—ՎԱՆՈՆԱԳԻՐ

ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

Վաւերացուած Աղգային Իշխանութեան կողմէ
4 Նոյեմբեր 1938 ի Նիստին

ՏՊԱԳՐ. Հ. Ս. ԲԻՒՐԱՏ

H. Burat

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

1938

Printed in Egypt

ՄՆՊ

ԳԱԶԻՐԷ-



ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

-----o-----

Վաւերացուած Աղգային Իշխանութեան կողմէ
4 Նոյեմբեր 1938 ի Նիսաին

-----o-----

ՏՊԱԳՐ. Հ. Ս. ԲԻԻՐԱՏ

H. Burat

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

1938

Printed in Egypt

ԾՐԱԳԻՐ—ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

—o—

Յօդ. 1. — Միութեանս անունն է ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ
ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ:

ՆՊԱՏԱԿ

—o—

Յօդ. 2. — Միութեանս նպատակն է գործակցիլ Ազգային Իշխանութեան, կազմակերպելով քրիստոնէական ուսուցումներ (լսարան, Կիրակնօրեայ Վարժարան. Կրօնագիտական հրատարակութիւններ և այլն):

« 3. — Օժանգակիլ Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցւոյ նորոգութեան և Միութի մէջ կառուցուելիք Մատրան և Ազգ. Վարժարանի շինութեան գործին:

« 4. — Քաջակերել այն երիտասարդները, որոնք կոչում և յարմարութիւն ունին քահանայական ասպարէզով ծառայել ազգին և եկեղեցիին:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

— — 0 — —

- Յօդ. 5. — Միութեանս կրնան անդամակցիլ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակները, առանց սեռի և տարիքի խտրութեան: Ամսական վճարումը իւրաքանչիւր անդամի առատաձեռնութենէն կախում ունի և պարտաւորիչ է:
- « 6. — Միութեանս մէն մի անդամին նշանաբանը պէտք է ըլլայ օրինակ հանդիսանալ այլոց իր մաքուր բարոյականով, սիրել Հայաստանեայց Եկեղեցին, կանոնաւորաբար ներկայ ըլլալ Կիրակի և Տօնական օրերու Մ. Պատարագներուն: Եկեղեցիէն ներս լրջութեամբ և երջիւղածութեամբ հետելիլ կրօնական պաշտամանց: Անդամուհիներուն արդ ու զարգը պէտք է ըլլայ պատշաճ և վայելուչ: Միութեանս անդամները պարտին Ս. Հաղորդութիւն ընդունիլ տարուան էինք Տաղաւարներուն:
- « 7. — Միութեանս անգամ-անգամուհիները կը բաժնուին երկու կարգի. համակիր և գործօն:
- « 8. — Համակիր անգամ կը նկատուին անոնք, որ կանոնաւորաբար ամսավճարներով կը նըպաստեն Միութեանս նպատակներուն իրագործման, և չեն ստանձներ ու եւ գործօն դեր, Միութեան կեանքին մէջ:
- « 9 — Գործօն են այն անդամները, որոնք յօգուտ Միութեան նպատակներուն իրականաւ

ցումին՝ սիրով յանձն կ'առնեն ամէն աշխատանք ու պարտականութիւնս :

Յօդ. 10. — Գործօն անդամներ են, որ ընտրելու և ընտրուելու իրաւունք ունին Ընտրութեան տարիքը 25ը անց պէտք է ըլլայ :

ՎՍՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Յօդ. 11. — Միութեանս պատուակալ նախագահն է Եգիպտոսի Հայոց Սրբազան Առաջնորդը :

12. — Միութեանս Վարչական Խորհուրդը կը բաղկանայ եօթը անդամէ . երեքը նշանակովի և չորսը ընտրովի . հետեւեալ կերպով. — Սրբազան Առաջնորդ Հայրը՝ հաւանութեամբ Ազգ. Իշխանութեան, ծխատէր քահանայ Հայրերէն մին կը նշանակէ վարիչ նախագահ Եկեղեցասիրաց Միութեան, որը իր կարգին խորհրդակցելով Պատկ. Քաղ. Ժողովին հետ, Միութեան գործօն այր անդամներէն կ'ընտրէ երկու վտանելի անձեր, որպէս գանձապահ և քարտուղար . իսկ չորս հոգին կ'ընտրուի գործօն անդամներով կազմուած ընդհ. ժողովէն :

13. — Վարչական այս կազմին անունն է՝ Վարչական Խորհուրդ Եկեղեցասիրաց Միութեան : Պաշտօնավարութեան շրջանն է երկու տարի և վերընտրելի :

Այս շրջանին պակասած անդամները կը լրացուին
ըստ վեր գրեալ Յօդ. 12ին:

Յօդ. 14. — Վարչ. Խորհուրդը իր բոլոր գործառնու-
թեանց իրազեկ կը պահէ Ազգ. Իշխանութիւնը
և Սրբազան Առաջնորդը:

« 15. — Վարչ. Խորհուրդը իր առաջադրած նը-
պատակներուն իրագործմանը համար կը կազմէ
օժանդակ և հանգանակիչ Զանձնախումբեր:

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

—o—

Յօդ. 16. — Միութեան դորձօն անդամները ընդհ.
ժողովի կը հրաւիրուին տարին չորս անգամ.
Հոկտ. Դեկտ. Մարտ և Մայիս ամիսներուն:
Վարչ. Խորհրդոյ Դիւանը՝ Դիւանն է ընդհ.
ժողովին:

« 17. — Ժողովը օրինական մեծամասնութիւն
չունեցած պարագային, նիստը կը յետաձգուի
մէկ շաբաթով: Չրդ. հրաւերին պատասխանող
ներկաներուն թիւը օրինաւոր կը նկատուի:

« 18. — Ընդհ. ժողովը կ'ըզբաղի հետեւեալ օրա-
կարգով:

Ա. — Ընտրութիւն Վարչական Խորհրդոյ ընտ-
րովի անդամներուն:

Բ. — Ընթերցում և վաւերացում Վարչական
Խորհրդոյ տեղեկագրին:

Գ. — Բարեփոխում Մրագիր-կանոնագրի:

ԴՐԱՄԱԿԱՆ

— 0 —

Յօդ . 19. — Հանգանակիչ Յանձնախուժքեր պատասխանատու են Վարչ. Խորհուրդին, Հանգանակուած գումարները՝ ծախքերը վար դրուելէ վերջ, մնացածը նոյնութեամբ կը յանձնուի Պատ. Քաղ ժողովին, որ իբր անձեռնմխելի գումար ի պահ կը գնէ դրամատուն մը, Դրամատան գործողութեանց թիւն ու թուականը կը գեկուցուի Վարչ. Խորհուրդին, Առաջնորդարանի Դիւանապետին կողմէ:

« 20. — Հանգանակուած գումարները անձեռնմխելի են և կը յատկացուին միմիայն իրենց նպատակին, այն է Ս. Պօղոս-Պետրոս Եկեղեցւոյ նորոգութեան, Սիւլֆի Աղբ. վարժարանի և Մատրան շինութեան և հողին գնման:

« 21. — Գնումներու և շինութեանց առթիւ Պատ. Քաղ. ժողովը՝ Վարչ. Խորհուրդին հետ խառն նիստ կը գումարէ և բոլոր որոշումները կ'առնուին միաձայնութեամբ: Տարակարծութեան պարագային Սրբազան Առաջնորդ Հօր վճիռը առանց առարկութեան երկուստեք ընդունելի է:

« 22. -- Վարչական Խորհրդոյ ծախքերը (կրթական, գրական, երթիւնեկ, պաշտօնեայ եւն) հանգանակութեան ծախուց մասը չի կազմեր,

այլ առանձինն կը հոգայուի Միութեանս ան-
գամ անգամուհիներուն ամսավճարներէն, նը-
րբատուութիւններէն, և ըն. այս նպատակին
համար կազմակերպուած հանգէս, ևրեկոյթ,
և ըն. ի հասոյթներէն.

Յօդ. 23. — Միութեան ամբողջ հաշիւները կը քըն-
նուին Առաջնորդարանի ընդհ. Հաշուեքննիչին
կողմէ և կ'ենթարկուին անոր հակակշռին:

Հաշուեքննիչին տեղեկագիրը պէտք է ըլլայ
երկու օրինակ, մին յղելի Պատ. Քաղ. Ժողո-
ւրն, իսկ միւրը՝ Միութեան Վարչական Խոր-
հուրդին:

ԲԱՐԵՓՈՆՈՒԹԻՒՆՔ

— o —

Յօդ. 24. — Սոյն Ծրագրի, — Կանոնագիրը, իր տնու-
նէն, նպատակէն և ճիմնական յօդուածներէն
դատ, (Յօդ. 10, 11, 12, 13, 14) ենթակայ է
բարեփոխումներու և գործադրելի է, բարեփոխ-
ուելէ վերջ, Ազգային Իշխանութեան որոշմամբ
և Սրբազան Առաջնորդի վաւերացումով:

ԼՈՒԾՈՒՄ

— 0 —

« 25. — Միութիւնը կը լուծուի, երբ գործօն անգամոյ թիւը կ'իջնայ հինգիս իսկ գոյքերն ու Սնտուկի պատրաստ գուժարը կը յանձնուի Քաղաքական Ժողովի Գանձապահին, Վոխան Ընկալապրի:

ՎՍԻԵՐՍՅՅԻՄ

Ազեքսանդրիոյ Հայոց Եկեղեցատիրոց Միութեան Ծրագիր-Կանոնադիրը, վաւերացուած ըլլալով Ազգ. Փաւստական Վարչութեան Պատկ. Քաղաքական Ժողովոյ 1938 Նոյեմբեր 4ի նիստին մէջ, կը հրահանգենք ի գործադրութիւնս:

Առաջն. Փոխանորդ Հայոց

Եգիպտոսի

ՄՍՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ

10 Նոյեմբեր 1938

Ազեքսանդրիա